

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան դիմ 10 րուր, կես տարվան 6 րուր:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանությունները:

Օտարապետացիք պիտի են ուղղակի
Тифлис. Редакция «Маск»

Խմբագրությունը բաց է առաջին 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Հայտարարությունները ընդունվում է մինչև լիզվելով:

Հայտարարությունների համար գնարում են
խորանային թաղանթի 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻՍԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Գոլոս» լրագրի յո-
գուածի առիթով: Նամակ Ալեքսանդրապոլից:—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սպանիա: Բազմաթիվ
Յունաստան: Թիբեթի: Նամակ Թիբեթից:—
ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ. — ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ. — ՔԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թիբե-
թացի Հայաստան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԳՈԼՈՍ» ԼՐԱԳՐԻ ԶՕԳՈՒԱԾԻ ԱՌԻԹՈՎ

«Голос» լրագրում (№ 169) մի գէպը
է մանրամասն նկարագրված, որ մեզ հայե-
րիս համար հարկադրաբար աւելի համո-
զիչ նշանակութիւն ունի, քան թէ 15
հաս հաստափոր գրքերի հատորներ ման-
րակրկիտ ապացոյցներով և փաստերով լրջ-
ված: Մինչդեռ ամբողջ քաղաքակիրթ աշ-
խարհում ամեն մի ազգ ապրում է բնական
կենսով և կառավարվում ու ներկայանում
է իր բանիւրուն լուսաւորեալ անհատների
միջոցով, մեզանում կան տակաւին շատ ան-
ձինք, որոնք—կամ թիւր տրամաբանով,
կամ, որ աւելի հաւանական է, անձնական
շահերից շարժված,—ամեն լոյս իրողու-
թեանը հակառակ՝ ազգային գործերի ղեկը
ուզում են դնել հոգեւորականների ձեռքը,
այնպիսի հոգեւորականների, որոնց տգիտու-
թիւնը և անընդունաւորութիւնը, որ աւելի
հրատարակվում է, առանց բացառութեան,
մեր հայախօս բոլոր պարբերական թեր-

թերի մէջ: Այդ թիւր տրամաբանները ու-
զում են մեզ հաւատացնել, որ հայ ազգը
կարող է աշխարհում ներկայանալ միմիայն
իր հոգեւորականների միջնորդութեամբ:
Նորանք առում են, որ եթէ մենք վար-
դապետների և եպիսկոպոսների միջոցով չը
ներկայանանք, և եթէ բաց թողնենք հոգե-
ւորականներին, այն ժամանակ բոլորովին
կը կորչի մեր ազգային նշանակութիւնը և
մենք իբրեւ ազգ կոչւնանք:

Ահա այդ վնասաբեր տրամաբանութեան
հակառակ է ուս լրագրում պատմվածը:
Անցեալ մայիսի 19-ին բախտաւոր եղան 18
հոգի ներկայանալ Օգոստոսի 1-ին Վայսրին
իբրեւ հատուկ ազգի պատգամաւորներ,
որպէս զի մի կողմից արտայայտէին իրանց
ազգի ցաւակցութիւնը անմոռանալի Վայսր
— չոր մահուան առիթով, իսկ միւս կողմից
իրանց հաւատարմ հպատակութիւնը յայ-
տնեն: Որոնք են այդ պատգամաւորութեան
անդամները: Դորանք չեն եկեղեցու պատ-
տօնները, կամ եպիսկոպոսները, այլ 17 զա-
նազան ուսումնական, գրականական, գիւ-
ղատնտեսական, երկրագործական, բարե-
գործական, գեղարուեստական ընկերու-
թեանց կողմից ուղարկված անձինք: Մէկը
պրոֆեսոր է, միւսը լրագրագետ, մի ու-
րիշը քաղաքային վարչութեան անդամ, և
այլն: Նրանց միջում կայ միմիայն մէկ հո-
գեւորական, և այն էլ ոչ իբրեւ եկեղեցու
ներկայացուցիչ, այլ իբրեւ հատուկների գը-
րագիտական ընկերութեան պատգամաւոր:
Եւ ինչպէս լրագրիւր ասում է, դիւր ու ա-

ծ ով պատահել է այդ պատգամաւորու-
թեան մէջ և «Սակալ» լրագրի խմբագրի
12 տարեկան որդին ևս:

Ուրեմն լուսաւոր ընկերութեանց ներկա-
յացուցիչները կարող են մի ազգի պատ-
գամաւորները լինել և հոգեւորականներից
աւելի լաւ ներկայացնել այն ազգը: և այս
դէպքում պէտք է իմանալ, որ հատուկները
ունեն գուցէ համալսարանում աւարտած
հարիւրի չափ հոգեւորականներ, որոնց
կուրծքը զարդարված է այլ և այլ շքանը-
շաններով: Բայց նորանք ընտրեցին պատ-
գամաւորներ բուն ազգային ինտելիգենցիա-
յից:

Այդ պատգամաւորութիւնը առաջ ներ-
կայացաւ արտաքին գործերի նախարարին,
որ նորանց ընդունեց սիրով, յետոյ գնացին
աղօթեցին Նորալուսոյց մատուռի մէջ, այն-
տեղից հանդիսաւոր կերպով գնացին Պետ-
րօպօլիսան մայր-եկեղեցին և այնտեղ դը-
րին մի ճարտարահմարման արձանի պատ-
յաւերմանը Վայսրի գերեզմանի վրա՝
հետոյ և ուստաց լեզուով արձանագրված
«Վայսր Ալեքսանդր Երկրորդին» երախտա-
գէտ հատուկ ազգից: Եւ այնտեղ աղօ-
թեցին հատուկներէն:

Յետոյ այդ պատգամաւորները Պետերհոֆ
գնալով տարվում են արքունի շէքի կառ-
քերով կայսերական պալատը և ներկայա-
նում են Վայսրին և Վայսրուհուն Պատգա-
մաւորներից մէկը բռնած է ունենում իր
ձեռքին դարձեալ հատուկներէն և ուստեքն
գրված հանրագիրը, որ կարգում է նա

զգացված ձայնով: Վայսրը բարեհաճում է
ողորմաճարար ընդունել հատուկների ընկե-
րութեանց ստորագրութիւններով ծածկված
հանրագիրը: Այդ միջոցին հետեւին «Սա-
կալ» լրագրի խմբագիրը հրաման է խըն-
դրում և արժանանում է ուղղել Վայսրու-
հուն մի ուղերձ նորապէս հատուկներ լեզուով,
որ թարգմանում է մի ուրիշ պատգամա-
ւոր: Վայսրուհին զգածված այդ հաւատա-
րիմ հպատակների զգացումներից շնորհա-
կալութիւն է յայտնում:

Ի վերջոյ խօսում են և երկու պատգա-
մաւորներ, որոնցից մէկը սրտանց անկեղծ
շնորհակալութիւն է յայտնում Նորին Վայ-
սերական Մեծութեան, որ նա արտօնութիւն
է շնորհել հատուկ ազգին իրանց լեզուով
գրքեր և լրագրեր հրատարակել և Վայսրի ու
Վայսրուհու կենաց համար բարեմաղթու-
թիւններ անելով՝ վերջացնում է պատգա-
մաւորը իր խօսքը այսպէս «Հատուկ ազ-
գը յոյս ունի որ այսուհետեւ պէտք է կա-
րողանայ առանց արգելքի արժարձել իր
ազգային գրականութիւնը և զարգացնել
իր գրականական լեզուն»: Ի՞նչ ապիւր և
արժանաւոր ու վսեմ հանդէս:

Հիմա այս պատգամաւորութիւնը բազ-
մաթիւ մեր այն արձանագրութեան պակի հետ,
որ և կ ե գ ե ու անունով մի քահանայ
տարաւ դրաւ անմոռանալի Վայսրի գերեզ-
մանի վրա և լուռ ու մունջ յետ դարձաւ,
մեր սրտերում ուրիշ տեսակ զգացումներ
են շարժվում: Մենք պէտք է միշտ ամա-
չենք քանի որ սխալ դիրք ենք բռնում

ԹԻԻՐԳԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆ

Ա. ՄԱՍԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Վանայ ծովը պէտք է վեր առնել նաև իբրեւ
յարբերութեան ամենակարճ ճանապարհը բոլոր
չրջակայ ծովափնեայ գաւառների, ինչպէս Ար-
ճիլոյ, Արձկէի, Ախլաթի, Մանազկերտի, Կարճ-
կանից, նաև Բաղլիյոյ, Մշոյ և Կարնոյ հետ,
եթէ չողենաւ շինութիւնը գլուխ գալ, դա մեծ
զարկ կը տայ Վանայ առևտուրին: *)

Վանայ առևտրական շրջանը շատ նեղ է, դա
կատարվում է նահանգի գաւառների մէջ: Նա յա-
րբերութեան դերին և հասարակ ճանա-
պարհների անգամ չունի. կառավարութիւնը
պարտք չէ համարել այդ կարևոր կէտի վրա
մտածել, դրա համար էլ Վանայ վիլայէթը
բոլոր հաղորդակցութիւններից կտրված մի
անձնաօթ աշխարհ է: Կ. Պօլսից Վան հե-
ռազրաւորը ամրաններով է հասնում: Փոստային
հաղորդակցութիւնը անկարգութեան պէս ան-
կարգ է, բայց և այնպէս պատու այդ
քաղաքի վաճառականներին, որ անտանելի
գիտարութիւններով ստանում են Կ. Պօլսից

և Երզրական ապրանքներ, Պարսկաստանից բաւ-
բալի, երկաթ, բրնձ, Ամերիկայից նաւթ, իսկ
Ռուսաստանի հետ ոչ մի հաղորդակցութիւն
չունեն: Չը նայած որ երկաթ, բրնձ *) պար-
սիկները Ռուսաստանից են փոխադրում Թաւրիզ
և այնտեղից Վան, չը նայած, որ ուստաց սա-
մանից մինչև Ալանց նաւահանգիստը երեք օր-
վայ ճանապարհ է, բայց թիւրքերը աշխատել
են անանցանելի առնել այդ ճանապարհը, որպէս
զի աղատ մեռան Սարի-Նիսափորի (գեղին ան-
հաւատ) խմորից:

Ճանապարհների այդ վիճակը արգելում է բո-
լորովին Վանայ նահանգի արդիւնաբերութիւնը
արտահանել, դրա համար էլ Վանի նահանգից
վաճառահանվում է միայն կեաժ (չուռ այծի
մաղ) և նրանով գործված շաւղիներ, նոյգներ,
ընկուզենու կոճղ և տառելի ձուկ:

Արհեստները նահանգեական ժամանակից
սկսած չարունակութիւնն են: Բազմաթիւ կտա-
ւագործներ, ներկարարներ, չիթ շինողներ կան,
որոնց գործը թէն կուլտ, բայց զինացու են գա-
ւառների միմիայն գործածականէ: Վերջին տա-
րիներին Թոխմախեան եղբայրները բարակ բամ-
բակեղեններ համար մի դործարան բացին, որոնց
մասնաժը Եւրօպայից են ստանում:

Մի գործարան ևս բացված է եւրօպական ե-
ղանակով կաշիներ պատրաստելու ազգայնու-
թեան զգացմունքը երկտասարդների մէջ արագ
զարգանում է: Ընթերցարանի և լսարանի ծա-
ռայող մի քանի ընկերութիւններ կան, որոնցից
նշանաւորը Խնամատար ընկերութիւնն է, որ
18 որբեր է խնամում:

Քաղաքում և Ալեքսանդր Բալկովի հայերի
թիւն է 18,965: Թիւրքաց թիւը 8450: Հայոց
վարժարաններ 8-են, որոնցից միւր միայն վերա-

*) Պարսիկներ բրնձը Երևանից նահանգիցն
են ստանում:

բերում է գեղեցիկ սեւին: 1460 աշակերտներ,
240 աշակերտուհիք, 12 եկեղեցիք:

2.

Թ ի մ ա ռ

Թիմար գաւառը Վանայ չրջակայ գիւղերն
են. հնում կոչվում էր Տոսպ: Վարազայ լեռը իր
մանր թեւերով և արեւմուտքից Վանայ ծովը չըջա-
պատում են այս գաւառը: Օղը բարեխառն է,
դիրքը մեծ մասամբ դաշտային: Աշակերտներ
ծաղկած չէ: Զուրը քիչ է, դուրս համար էլ վարա-
զայ լեռան ջրերը ժողովվում են երեք լճերի մէջ,
որոնցից օգուտ են քաղում և Վանայ այգեստան-
ները: Վանից 3 ժամ հեռաւորութեամբ Արջակ
գիւղի մօտ մի բնական լիճ կայ, որ խիստ աղի,
դառն է և անկենդան: Չը նայած նրա անկենդա-
նութեան չըջակայ գիւղացիք ստեղծել են իրա
համար յաւերժական բնակիչներ, հրեղէն ձիւր և
գոմէշներ, որոնք երբեմն դուրս գալով խաւը-
վում են իրանց նմանների հետ և ազնուացնում
են կենդանեաց ցեղը:

Վանայ մերձակայ գիւղերը՝ ինչպէս Աւանց,
Ախլի, Շահաբադի, Գոչանի զարդարված են այգես-
տաններով, որոնց թէ պտուղները և թէ գինին
ընտիր են: Զանիկ գիւղը մեծ աղի հանքեր ունի,
Էրմանց գիւղը—ածխահանք:

Այս գաւառի միջից անցնում է Ա Գետը, որ
Մարմին գիւղի միջից անցնելով, Եկմալ գիւղի
առաջից թափվում է ծովը:

Աւանց գիւղը Վանայ նաւահանգիստն է: Այս
գիւղի բնակիչները արեւաբնային կրակով շոգիաց-
նելու միջնորդութեամբ, ստանում են ծովի ջրից
մի տեսակ աղերի և նատրոնների խառնուրդ, որ
բնակիչներից բաւարակ է անուանվում: Դա գործ
է անվում: Օճաւաղործներից օճաւաղիւնութեան
համար, լոգարաններում, լուսարաններում, որ
մարդը և միանգամայն մազեր փափկանող
յաւակութիւն ունի, տանտիկները դժարեմբ ըն-
դեղները դերանի են դարձնում դրանով:

Թիմար բոլոր գաւառների մէջ ամենաաղքատն
է թէ բնականապէս և թէ նիւթապէս:

Գիւղերի թիւ.....	118
Հայերի թիւ.....	38,889
Թիւրքերի թիւ.....	230
Վարժարաններ.....	14
Աշակերտներ.....	2,800
Եկեղեցիներ.....	65
Վանքեր.....	13

Միացեալ ընկերութիւնը այս գաւառի մէջ
երեք վարժարաններ է բացել՝ Ախլի, Խառակո-
նիս և Կիւսնեց գիւղերում:

3.

Բ ե Ր Կ Ր

Բերկրի, հնում Աւերբուհի, Վանայ հիւսի-
սային կողմն է, Թիմար, Խօշար և Արճէ գա-
ւառների մէջ: Վանէն 12 ժամ հեռաւորութիւն
ունի. գաւառագլուխն է Բերկրի բերդաւանը, բայց
այժմ այն պատմական Բերկրին չէ մնացել,
երևում են, այո, հին բերդի մնացորդներ և աւե-
րակների մեծամեծ կոյտեր, որոնց վրա շինված
են ողորմելի խցիկներ: Այս վերջին ուսութիւն-
քական պատերազմին, Բերկրին բանակաւոր
էր տաճիկ զօրաց, որոնց կեղեքող վարմունքից,
մնացած բոլոր հայ բնակիչները փախան և ցրվե-
ցան: Մնացել են մի քանի տուն Թիւրքերի, ինչ-
պէս այդ աւերակների բուր: Այս գաւառում
նշանաւոր է Տէր-Յուսէփ որդոյ վանքը, որի
շուրջը մի քանի բնական քարայրներ կան: Բէն-
դիմահու գետը բարձրացած լինելով ողորմում էր
Փշիկ-գլուխէթի կամօջի ձախ թիւ ու անկարելի
էր անցնել և ուղղակի ճանապարհով Արճէ գետ,
հարկ եղաւ 4 ժամ աւելի պոռոյս տալ, ստատա-
նայի կամօջից անցնելու համար:

Այդ հին կամօջից որ Բերկրի մօտն է, մի
նկարչական տեսարան է ներկայացնում:
Բէնդիմահու գետը Վանայ ծովի ամենամեծ
գետն է, որ քարէ օրօրանի մէջ սրնթաց վա-

նայ մտաւորային ցոլիմ յայտնաբերում

պատմութեան մէջ. Բերլին ուղարկեցինք արեղաներին, Ս. Պետերբուրգ հոգեւորականին, վաղէն էլ Մոսկվա, Կայսրի թագադրութեան հանգիսին ներկայ գտնվելու համար կուղարկենք ոչ թէ զարգացած և արժանաւոր աշխարհականներին, այլ երեւի դարձեալ մի վեղարաւորին:

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

Յունիսի 25

Ձեր նայելով որ միջնակարգ դպրոց ունենալու պատանջը օրտաօրէ զգալի է դառնում մեր քաղաքի համար և բնակական դպրոց բաց անելու համար կառավարութեան պահանջած 7,000 ռ. գումարը արդէն բոլորովին պատրաստ է, այնուամենայնիւ չը կայ կանոնադր հետեւողութիւն շուտափոխ թոյլտուութիւն ստանալու մի այդպիսի դպրոց հիմնելու համար: Այստեղ կ'ստանաւ և թերուտ աշակերտներ մնում են անգործ, շատ անգամ պարագ թափառելիս, իսկ մեր պ. պ. հասարակական գործողները մի այսպիսի կենսական պահանջի վրա, մի այսպիսի առաջնակարգ հարցի վրա երկրորդական և երրորդական ու չափութիւն են դարձնում: Այժմ մի կողմից առաջ են գալիս այստեղ դասնադաս անձուներ և մանրակրկիտ պատճառաբանութիւններ, որոնք յետագում են միջնակարգ դպրոցի բացումը, միւս կողմից կան մեղանում շատերը, որոնք աւելի լաւ են համարում կոյր լինել, քան տեսնել բացումը այդ ուսումնարանի: Կան այն աւտիճան խառնակիչ անհատներ, որոնք փորձում են հաւատացնել միամիտներին թէ՛ «7,000 ռ. պատրաստի չէ, իսկ եթէ պատրաստ էլ լինի, դարձեալ կ'առավարութիւնը չի բանայ Ալեքսանդրապոլում միջնակարգ դպրոց»: Որքան ուղում են բղաւեն ու ճղաւեն և քանան հակառակը ցոյց տալու, այնու ամենայնիւ՝ այս այսպէս է:

Այնչէն երբ մեր հասարակութիւնը պիտի խափվի ճարտիկ վարչապետութիւնից և հանձնական ու շուրջքերով կեղծ ու պատրի խօսքերից:

զում է, բայց որքան մօտենում է կամըջին, նեղվում է նրա ճանապարհը և կամըջի տակին բուրովին ծածկվում է. մի քանի քայլ անելուց թափառելով, ակնայն խլացնող դղրդիւնով դուրս է վրձում երկրի խորքից: Յաւելով յիշեցին որ լուսանկարչական գործիքներ չունին հետո այդպիսի մի հրաշալիաւ տեսարան այսօր ձեռք ներկայացնելու: Առաւօտ էր. այդ տեսարանից կըշտանալու համար վեր եկանք ձիւրից մի քանի բողբոջ անելով մտիկ անելու: Իսկայն մեզ չըջապատեցին քուրդ կանայք և աղջկերք, որոնք խիտ հետաքրքրվում էին մեզանով. ես նրանցից խնդրեցի երգել, մանկամարդ աղջկաներից մէկը իր գողտրիկ ձայնով զլեց մի խոժաղուժ երգ, խոժաղուժ եղանակով, որ այն ամենի տեսարանի և ամայի բնութեան հետ խիտ ներդաշնակ էր:

Արաղայի մեծ դաշտը այս գաւառի մէջն է, որի հիւսիսարեւելեան ծայրին է Բալաղլի և Թաղէի վանքը պարսից սահմանի վրա:

Արաղայի արևմտեան սահմանի վրա, մօտ 5 ժամ տարածութեամբ ձգվում է մի հրաբխական սև քարքարուտ, ուր մեծամեծ անձաւներ կան, ջուր, արօտատեղիք, որի մէջ մինչև 12 հազար հոգիք կարող են ծածկվել. ճանապարհ չիմացողի համար դա մի լաբիրինթոս է: Այս տեղ են ապաստան գտնում բոլոր առևանգողները, գողերը և մարդապահները: Գաւառիս օդը բարեխառն է, ջուրն առաւ, մշակված են միայն հայաբնակ մասերը:

Բնիկ-մահու գետը Արաղայի սարերէն կազմվելով անցնում է Բերկուռ մօտից, կտրում է վանայ Արձնչոյ ճանապարհը և թափվում է ծովը, ուր մեծ քանակութեամբ տառելի են բռնում: Բերկուռ արեւելեան կողմն է. Ապահան լեռը, որի ծայրին գտնվում է Համանուն լիճը, որ կուռգէ շրջակայ գիւղերը: Գիրքը մեծ մասամբ դաշապին է, երկրը պղտորու և լեռները

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՊԱՆԻԱ

Ռուսաստանի և Գերմանիայի մէջ հալածված հրէաներին Սպանիայի հիւրընկալութիւնը առաջարկելու սկզբնապատճառը սպանիական թագաւորն է եղել և ոչ թէ ազատամիտ միւնիստրութիւնը, ինչպէս առաջ կարծում էին: Հաւատացնում են, որ միւնիստրները չափազանց զարմացած էին, երբ թագաւորը առաջարկեց հիւրասիրել հրէաներին, որպէս զի ոչնչանայ այն տրագաւորութիւնը, որ գործել են ամբողջ աշխարհի վրա հրէաների նախնի հալածանքները Սպանիայի մէջ: Միւնիստրների խորհուրդը հաւանեց այդ առաջարկութիւնը և թագաւորը ինքը թելադրեց այդ գործի մասին հեռագիրները Սպանիայի ներկայացուցիչներին օտար պետութիւնների մօտ:

Մարտի 1-ի խաղաղների տէրերը նշանաւոր անկարգութիւններ գործեցին, որովհետեւ պոլիցիան արգելեց նրանց պարագել այդ ստոր գործով: Կաղէրծի յօդակներն յետոյ խաղաղներից շատերը փակվեցան, իսկ մնացածները յանձնվեցան պոլիցիայի հսկողութիւնը: Գրանից յետոյ փողոցների վրա ձայնով ուռմբիկ զգվեցան: Կալանաւորվածներից մէկը ցոյց տուեց իր համախոհներին, որոնցից 17 մարդ կալանաւորված են: Գրանից շատերը խաղաղների տէրերն են կամ նրանց մէջ ծառայողներ: Յանցաւորները երեւի կենթարկվեն տաժանակիր տալանտներին:

ԲՈԼՆԱՍՏԱՆ

Սիստոօփո միջ շուտով կը զուգարկի բուրգարական ազգային ժողովը, որ առանց վիճարանութիւնների կը քուէարկէ միայն, թէ արդեօք պէտք է ընդունել բոլորական իշխանի պահանջները թէ ոչ: Ժողովը միայն

մի օր կը շարունակվի: Այդ օրվայ ընթացքում մի զօրաբաժին հրացանները պատրաստ կանգնած կը լինի Սիստոօփո մէջ: Գունայ գետի վրա պատերազմական փոքր նաւեր նոյնպէս պատրաստ կը լինեն: Հաւաքաւոր ընտրողներ կը հաւաքվեն քաղաքի մէջ, որպէս զի հսկին իրանց ընտրած պատգամաւորների վրա: «Times» լրագրի թղթակիցը հաղորդում է, որ բոլորական ժողովուրդը հետզհետէ զայրանում է իշխան Ալեքսանդրի քաղաքականութեան դէմ: Այդ կողմից ուշադրութեան արժանի է Արեւելեան-Բուլկիայի մէջ հրատարակվող «Марина» լրագրի յօդուածը, որ չափազանց պախարակում է բոլորական կառավարութեան գործարած կամայական միջոցները ընտրութիւնների վրա ազդելու համար և աւելացնում է, թէ «պետական պարզ յիշափոխութիւնը աւելի լաւ կը լինէր, քան թէ այդ խորամանկ միջոցները»: Այդ խօսքերը վերաբերում են իշխան Ալեքսանդրի կողմնակիցներին: Պէտք է նկատել, որ այդ լրագիրը չափաւոր կուսակցութեան օրգան է և որ մինչև այժմ նա մեծ զդուշութեամբ էր վերաբերվում բոլորական պետական դժուարութիւններին:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յոյն-թիւրքական սահմանական մասնաժողովը արդէն հասել է Արտա, որտեղ նա սպասում է Գերվիշ-փաշային Պրեվեզա ուղևորվելու համար: Մասնաժողովը պահանջում է, որ Արտան դատարկվի մինչև յուլիսի 5-ը: Եւրօպական պետութիւնների գործակաւորները հասան Պրեվէ, որտեղ նրանք երկար ժամանակ խորհրդակցում էին Կուստանդուլի և պատերազմական միւնիստրի հետ:

Թիւրքերը մի անգամ հեռացան Արտայից, բայց յանկարծ նորից վերադարձան և դրաւեցին ամրոցները: Լուր տարածվեցաւ, իբր թէ սուլթանը յայտնել է տեղական իշխա-

նութեանը, որ նա Արտայի տեղ Յունաստանին կը տայ Էլասսոն: Յունական լրագիրները յայտնում են, որ Թիւրքաց զօրքերը վերադարձան Արտա եւրօպական դեսպանների խորհրդի համեմատ քաղաքի մէջ կարգը պահելու համար մինչև յունական զօրքերի հասնելը: Յոյն-թիւրքական դաշնագրութեան համեմատ եւրօպական սահմանական մասնաժողովը կը գայ Արտա առաջ, քան թէ յունական զօրքերը կը դրաւեն այդ քաղաքը:

ԹԻՒՐԿԻԱ

Կ. Պօլից «Polit. Corresp.» լրագրին գրում են հետեւելու: Ֆրանսիայի և Թիւրքիայի յարաբերութիւնների մասին զանազան լուրեր են տարածված: Մի կողմից պատմում են, թէ Ֆրանսիական դեսպանը Կ. Պօլից հեռանալուց առաջ խաղաղասիրական յայտնութիւններ ստացաւ Բ. Գունից Ֆինանսական հարցի վերաբերութեամբ, իսկ միւսները հաւատացնում են, թէ Յունիսի գործերը մինչ այն աստիճան վատացրին Ֆրանսիայի և Թիւրքիայի յարաբերութիւնները, որ Ֆրանսիական դեսպանի հեռանալը Կ. Պօլից զիպլօմատիական անբաւականութեան հետեւեւ է: Ամենից հաւանական է, որ Բ. Գունը կը զգուշանայ Ֆրանսիայի հետ իր յարաբերութիւնները ընդհատելուց: Ամենքը յիշում են, որ Ֆրանսիան յունական ինդրի լուծելու ժամանակ խոհեմութեամբ էր գործում: Գօշէն և կոմս Հալֆիլդ եկան Կ. Պօլիս պատրաստի մի նախագծով, որ նրանք կամենում էին ընդունել տալ Բ. Գրանը: Այդ նախագծի համեմատ Թէսսալիան և Կրիտ կզգին պէտք է յանձնվէին Յունաստանին և Թիւրքաց հաւատարմատարները պէտք է չը մասնակցէին դեսպանների խորհրդին: Ֆրանսիական դեսպանը ընդդիմացաւ այդ նախագծին: Նա ապացուցեց, որ Կրիտ կզգին Յունաստանին զիջելը նոյնքան անկարելի է, որ-

Գիւղերի թիւ.....	81
Հայերի թիւ.....	9,959
Վարժարաններ.....	5
Նշակերտներ.....	308
Քրդեր.....	8,608
Ասորիք.....	1,447
Հրէաներ.....	489
Այս գաւառում բնակվում է Շիտանցի ցեղի մի մասը:	

Գ. Ե. Ա. Վ. Ո.

Կեալաւ Վանէն 24 ժամ հեռաւորութիւն ունի, կից է Աղբալին, Եօթուղին, Ջղիլին և Ուրմանուղին: Արեւելեան կողմից սահմանակից է Պարսկաստանին: Գաւառագլուխն է Տիգէ մեծ գիւղը և Նէյրի, ուր նստում էր Շէյխ Իբահուլլահ, որի անունը անցնելով 1880 թ. Պարսկաստանի մէջ արած ասպատակութեամբ յայտնի եղաւ աշխարհին:

Այս գաւառը գրեթէ ամբողջապէս քրդերով է բնակեցրած: Հայերը հանգիստ չը գտնելով քրդերի երեսից, մի մասը ցրվել, մի մասը քրդացել է, մնացած մասը քրդերից զանազանութիւն չունի: Նէյրի անունով գիտակը այս գաւառից անցնելով դէպի Եօթուղի օժանդակում է Տիգիսին: Գիրքը լեռնային, վայրենի և ամուր է:

Գիւղերի թիւ.....	72
Հայերի թիւ.....	5,975
Ասորիքի թիւ.....	8,905
Հրէաների թիւ.....	320
Քրդերի թիւ.....	10,226

Պէտք է նկատել, որ այս գաւառում ոչ եկեղեցիներ և ոչ ուսումնարաններ կան:

Ջ. Ի. Է. Լ. Ե. Բ. Կ. Զիւլամերի հեռի է Վանէն 25 ժամ ճանապարհով: Այս գաւառը կից է Գեալաւ, Աղբալ, Եօթուղի և Շատախ գաւառներին: Գիրքը լեռ-

արօտներով լի: Արաղայի դաշտից հեռու չէ Թոնի անտառաված հրաբխային բաժակը, որի ստորոտներից հանում են առատ ծծումբ: Գործով գիւղի մօտ գտնվում են քարածուխի հանքեր և նաւթի աղբիւրներ: 2,200 տուն գաղթական կարող է տեղաւորվել մասնաւորապէս (Արաղայի մէջ, որ հնում 300 գիւղացի է եղել, այժմ 400 տուն հէյոտարանից քրդեր են բնակվում, խաչարածութեամբ և գողութեամբ ապրելով: Արաղայ դաշտը բոլորովին անմշակ է մնացած:	
Գիւղերի թիւ.....	93
Հայերի թիւ.....	16,964
Քրդերի թիւ.....	5000
Նշակերտ.....	400
Վարժարաններ.....	2
Նշակերտներ.....	75

Միացեալ ընկերութիւնը մի ուսումնարան է բացած Գործով գիւղի մէջ, Գործով գիւղը նշանաւոր է Վապուրականի մէջ իր բնակիչների քաջասիրտութեամբ:

Զ.

Խօշաբ գաւառը վանայ հարաւարեւելեան կողմն է, նրանից 10 ժամ հեռաւորութեամբ: Հայոց ձոր, Եօթուղ, Ջիւլամերի, Աղբալ և Բերկի գաւառները նրան շրջապատում են: Հիւսիսային կողմից ձգվում է մինչև Գօթուր, պարսից սահմանը: Գաւառագլուխն է Խօշաբ բերդաւանը, որ ունի անբնակների դերբուլներ և մի կիսակործան բերդ, Խօշաբ գետի աջափի քառաթալի վրա նկարչական գեղեցիկութեամբ բարձրացած: Գիրքը սարալաշտեայ է: Ունի զօլաւուն լեռներ: Չուխ լեռը (հնում Արնոս), որի վրայով անցնում է Վանայ և Թաւրիզի առեւտրական ճանապարհը, ձմեռը խիտ վտանգաւոր է լինում. շատ անգամ բքի տակ թաղվում են ամբողջ կարաւաններ: Ողբ ցուրտ է, հոգն արագաբեր. սնուցանում է բաղմամբի ոչնախների

հօտեր: Ունի մի գետ Խօշաբ անուն, որ Հայոց-ձորից անցնելով, Անդալ գետ է կոչվում Անդալ վանքի *) և զեղի անունով: Այս գետէն, ինչպէս Վանայ ծովը թափվող բոլոր գետերից, տառելի ձկներ են բռնվում:	
Գիւղերի թիւ.....	48
Հայոց թիւ.....	9,966
Նշակերտ.....	1,500
Վարժարանի քրդեր **)	3,886
Վարժարաններ.....	2
Նշակերտներ.....	91
Նշակերտներ.....	2

Վ. Զ. Բ. Կ. (Հ. Ե. Բ. Կ.)

Վանէն 24 ժամ հեռաւորութիւն ունի, սահմանակից է Խօշաբ, Գեալաւ և Ջիւլամերի գաւառներին: Հիւսիս-արեւելից հանում է Սալմաստ, պարսից սահմանին: Գաւառագլուխն է Բաշ-գալէ աւանը, որ Վանայ և Թաւրիզի մասնաւորական ճանապարհի վրա է: Գիրքը հարթ, օդը ցուրտ, վտակները ձկնալի, հոգն արգիւնաբեր. սնուցանում է ոչնախներ, եզներ, ընտիր և անուանի են գոմէշները: Սարալէր գիւղի մօտ կաւիճի հանք կայ: Աղբալի մէջն է Բ. Բարդուղիւնոս առաքելու հայկապ մէջնը, որ մօտեւր «Միացեալ ընկերութեան» յանձնվեց մի գիւղերովի ուսումնարան կառուցանելու համար:

Այս գաւառը ծածկված է բաղմամբի բերդերի և վանքերի արեւակներով, որ չինված են եղել Արծրունեաց թագաւորութեան ժամանակ, ուր գտնվում են և նրանց գերեզմանները:

*) Անդալ վանքի տեղանի հիմնաժառանգ միշտ քրտնած է լինում իւրային կաթիլներով: Ջերմեռանդ ուսումնարանները այդ կաթիլները ժողովում են և իբրեւ հրաշագործ աչքացաւի դեղ գործ են անում: Քննված չէ, թէ ինչից է առաջ դալիս այդ իւրը:

**) Գիրքերի 4 ցեղեր, որը են մուկուրցիք, Թակուրցիք և չիտանցիք:

